## Դաս 20. Հայաստանի ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները

### Ասորական լեգենդ

*Ասորական Նոր տարվա տոնի հիմնավուրց ակունքների մասին է պատմվում մի գեղեցիկ լեգենդում: Ըստ այդ լեգենդի՝ ասորական սիրո և պտղաբերության աստվածուհի Իշտարը մի օր խնդրում է իր եղբորը՝ Արևի Շիմշա աստծուն, որ նա օրհնի իր ամուսնությունը հասարակ հովվի՝ Թամուզի հետ:*
*Կայացած ամուսնությունն ունենում է իր արգասիքը. Իշտարի և Թամուզի ամուսնության շնորհիվ երկրի երեսին սկսվում է բերրիության շրջանը: Այնպես է ստացվում, որ Թամուզին քշում են անդրաշխարհ: Իշտարը փնտրում է սիրելիի համար, ուրախությունն ու բերրիությունը վերանում են երկրի երեսից: Լեգենդի համաձայն՝ բազմաթիվ չարչարանքներից հետո Թամուզը վերադառնում է անդրաշխարհից հենց ապրիլի 1-ին: Իշտարն ապրում է մեծ երջանկություն: Այս գեղեցիկ սիրո երջանկությունից երկրի երեսին ամեն ինչ ծաղկում է, պայծառանում: Տոնակատարության փասներ-կուերորդ օրն ավարտվում է հարսանիքով: Գարնան ավետաբերը՝ ապրիլի 1-ը, այսպիսով, համընկնում է ասորական Նոր տարվա հետ:*